Բազմաթիւ են սակայն և այնպիսի արձանագրութիւններ, որոնք թուական չունին եւ ոչ պատմական որ եւ է անձի յիշատակութիւն, որով կարելի լինէր նրանց ժամանակը որոշել. նրանք ամենայն հաւանականութեամբ ԺԴ.–ԺԴ. դարի կէսերի արդիւնք են։ Այսպէս, ահա Գրիգոր «յառաջնորդութեան Զա...(քարիայ)ի միայնաւորի» նուէր է տալիս։ Զաքարիան հաւանօրէն ԺԴ. դարի առաջին կիսում, հայր Բարսեղի յաջորդներից մէկն է (Ցաւել. Ա. 82). Մամքան տալիս է 20 դահեկան եւ երկու օր ժամ ստանում (Ցաւել. Ա. 83). Յովհաննէսի որդի Սուրբայն տալիս է 20 դահեկան եւ տարին մի օր ժամ ստանում (Ցաւել. Ա. 84). Ուսլունը 80 դահեկանով թափում է «զԴառնոյ խուպանն» եւ չորս ժամ ստանում իւր եւ իւրայինների համար (Ցաւել. Ա. 86, պատկ. 140). Մխիթար ահա նոյնպէս 80 դահեկան նուիրելով, չորս օր է ստանում իւր եւ իւրայինների համար (Ցաւել. Ա. 87). Ատոմ եւ Արքայ ամուսինները ուխտ են գալիս եւ իրենց տունը երեւանում ընծայում վանքին, ստանալով վեց օր ժամ (Ցաւել. Ա. 88)։

Ատոմի արձանագրութեան տակ մնացած են երեք արձանագրութեան բեկորներ. նորոգութեան ժամանակ արձանագրութիւնների քարերը մասամբ կորել են, մասամբ խառնուել իրար (Ցաւել. Ա. 89–90)։ Առաջին նուիրատուն Ումեկն է. ո՞վ է նա. արդեո՞ք Գանձակեցու եւ Վարդանի յիշած վաճառական Ումեկը(*), որ ԺԴ. դարի քառասնական թուերին Մանազկերտից կամ Կարինից արեւելեան Հայաստան փոխադրուելով, հաստատուեց Տփխիս քաղաքում, շինեց կաթուղիկէ կամ մէյդանի Ս. Գէորգ եկեղեցին, կալուած ձեռք բերեց Գետիկում՝ ժառանգութիւն թողնելով իւր ճար որդուն, երկրորդ անգամ ամուսնացաւ Հասան-Ջալալի դստեր Մամախաթունի հետ, որի Վախտանգ որդին Յովհաննէս երգնկացու մեկենասը եղաւ, ասել չենք կարող (**)։ Այդ ժամանակից նոյնանուն անձն մեզ յայտնի չէ ոչ մի տեղից. նա մեռաւ ՉԺԵ (= 1266) թուին(***)։ Նոյնութեան դէպքում կ'որոշուի մօտաւորապէս և արձանագրութեան ժամանակը։ Երկրորդ նուիրատուի անունը չգիտենք. բայց նա հինգ օր ժամ է ստանում, մէկը Ոսկեհատին, որ իւր կինը կարող է լինել, եւ չորսն իրեն։ Երրորդ նուիրատուն է Վարդ, որ, երեւի հիւսիսային աւանդատան վերին յարկն է շինել, մի հնձան նորոգել եւ կողմնուտի այգին նուիրել, ստանալով 8 օր, վեցն իրեն, մէկը իւր հօրը Ստեփանոսին և մէկը իւր կնոջը Հասխաթունին։



Պատկեր 140.

Ապա Մխիթար ահա տալիս է 20 դահեկան եւ մի

(*) Գանձ. Ղուկ. հրատ., եր. 349։ Վարդան. Լմինի հրատ. Մոսկուա, 1861, եր. 193։

(**) Տես մեր «Վախտանգ որդի Ումեկայ և նորա տոհմը», Սիոն, 1932 Դեկտ. և հետեւեալ տարին։

(***) Ջեռ. Էջմ. № 2188/2174, 48բ.։